

Նկարագիր

Ի՞նչ է ԲՄԱԳ-ը

Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման (ԲՄԱԳ) միջոցով կատարվում է շրջակա միջավայրի և համայնքների վրա Ծրագրի հնարավոր ազդեցությունների ու ռիսկերի կանխատեսում և գնահատում: ԲՄԱԳ-ը սահմանում է նաև վերոհիշյալ ազդեցություններն ու ռիսկերը կանխատեսելու, նվազեցնելու կամ փոխհատուցելու նպատակով Ծրագրի ընթացքում ձեռնարկվելիք կառավարման միջոցառումները: Այն ներառում է տվյալ Ծրագրին առնչվող ազգային և միջազգային ռազմավարությունների, օրենքների և կանոնակարգերի ուսումնասիրություն, ինչպես նաև համապատասխանության գնահատում:

ԲՄԱԳ-ները լայնորեն կիրառվում են միջազգային մակարդակով խոշոր ծրագրերով պայմանավորված ռիսկերի և ազդեցությունների բացահայտման նպատակով: Բնապահպանական և սոցիալական ճիշտ որոշումներ կայացնելու առումով դրանք հանդիսանում են հիմնական գործոններից մեկը: Լիդիանի պես ընկերությունները, որոնք մասնակիորեն ֆինանսավորվում են Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) կողմից, պարտավոր են կազմել ԲՄԱԳ-ներ իրենց ծրագրերի համար: Խորհրդատվությունը համարվում է ԲՄԱԳ-ի գործընթացի հիմնական տարրերից մեկը:



Ամուլսարի ոսկու ծրագիր

Ամուլսարը հանդիսանում է Հայաստանի տարածքում ոսկու և արծաթի արդյունահանման ծրագիր: Այն գտնվում է Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի սահմանագլխին: ԲՄԱԳ-ի ուսումնասիրման գոտին ներառում է երեք գյուղական համայնք, այն է՝ Սարավանը, Գնդեվազն ու Գորայքը, ինչպես նաև Ջերմուկ քաղաքը:

Ծրագրի տևողությունը կազմելու է ավելի քան 12 տարի, այդ թվում՝ 2 տարվա շինարարություն: Արդյունահանման աշխատանքներից անմիջապես հետո նախատեսվում է իրականացնել տեղամասի ռեկուլտիվացում, փակում և վերականգնում, որի համար կպահանջվի մոտ 5 տարի:

Ինչո՞վ է այն տարբերվում ՇՄԱԳ-ից

ԲՄԱԳ-ում ամբողջությամբ ներառված է Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) համար հայաստանյան օրենքներով պահանջվող տեղեկատվությունը: ԲՄԱԳ-ը ներառում է ազդեցությունների և մեղմացման միջոցառումների գնահատման ավելի լայն շրջանակ:

Տեղական օրենքներով սահմանված բնապահպանական պահանջներից բացի, ԲՄԱԳ-ը առաջնորդվում է նաև ավելի լայն միջազգային չափանիշներով և ներառում է սոցիալական ազդեցությունների գնահատում:

Շահագործման մեկնարկից հետո Ծրագիրն ունենալու է՝

- Շահագործվող 3 տեղամաս՝ Արտավազդես, Տիգրանես և Էրատո,
- Հանքաքարի մանրացման և ջարդման հանգույցներ, որոնք տեղակայվելու են հատուկ այդ նպատակով կառուցված փակ շինություններում,
- Փակ փոխակրիչ, որի միջոցով հանքաքարը տեղափոխվելու է վերամշակման գոտուց մինչև կույտային տարրավազման հրապարակ,
- Կորզման համար նախատեսված կույտային տարրավազման հարթակ,
- Հարստացման հանգույց (աղսորբցիա/դետորբցիա/վերականգնում)
- Դատարկ ապարների լցակույտ